

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թ. հունվարի 27-ի նիստի որոշմամբ մարտի 10-ը հայտարարվել է ինստիտուտի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն 2017 թ. հունվարի 28-ից մինչև փետրվարի 28-ը ընդունվում են Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ հիմնադրամի շենքում (հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան 11, 2-րդ հարկ, 35 սենյակ, ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի քարտուղար Մ.Իսախրյանին):

Մրցույթը կայանալու է ինստիտուտի շենքում 2017 թ. մարտի 10-ին ժամը 12-ին:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում, իսկ ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ կառուցվածքային ստորաբաժանման առաջադրման մասին որոշումը և առաջադրվելու վերաբերյալ հավակնորդի գրավոր համաձայնությունը,

բ) լուսանկար,

գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի, գիտական աստիճանը և գիտական կոչումը հավաստող վկայականների պատճեններ,

զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

է) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

ը) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ,

թ) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե այն գործում է),

ժ) հավակնորդի գործունեության ծրագիր՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

Սույն կետի «դ», «ը» և «ժ» ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը ներկայացվում է նաև էլեկտրոնային տեսքով՝ «Microsoft Office, Word» ծրագրին համապատասխանող ձևաչափով:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 10 օր առաջ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը (համարակալած և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրված) հանձնվում է խորհրդի քարտուղարին՝ առձեռն կամ փոստով:

Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, ով ունի գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի գիտական կոչում:

Ինստիտուտի ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի՝ խորհրդի անդամ չհանդիսացող հավակնորդների համար):

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ